







**Հարգելի՛ համաքաղաքացիներ,**

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզված եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

**Երևանի քաղաքապետ՝  
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**



**Արաբկիր վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,**

մուտք ենք գործում 2017 թվականի՝ ծրագրային բազմաթիվ նոր փաթեթներով: Սահմանել ենք բավականին բարձր նշանող և այս տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն էլ հավատ են ներ-

շնչում, որ, անշուշտ, կարո՛ղ ենք անել ավելին: Շնորհակալ եմ ձեր վստահության, սրտացավ վերաբերմունքի, համատեղ աշխատանքի ու նոր առաջարկների, նաև պարտավորեցնող ջերմ խոսքերի ու առողջ քննադատության համար: 2016-ին արձանագրված նոր ձեռքբերումները հպարտության առիթ են: Արաբկիրը յուրաքանչյուր արաբկիրցու տունն է, և կցանկանամ, որ այն միշտ փայլի իր բարեկարգ, մաքուր ու կանաչ տեսքով: Թող գալիք տարին նախ և առաջ լինի խաղաղության, ապա նաև երջանկության ու հաջողությունների տարի: Մեր համատեղ, շարունակական աշխատանքն էլ, համոզված եմ, հնարավորություն կտա ունենալու բոլորիս պատկերացրած Արաբկիր վարչական շրջանը:

**Արաբկիր վարչական շրջանի ղեկավար՝  
Հովհաննես Վարդանյան**






**2016թ. Արաքկիր վարչական շրջանում իրականացվել են**

- ⊗ փողոցների և բակերի ասֆալտապատում՝ **62 000մ<sup>2</sup>**,
- ⊗ եզրաքարերի փոխարինում՝ **325.5մ**,
- ⊗ թեքահարթակների կառուցում և վերանորոգում՝ **37 հատ**:

Վարչական շրջանում ևս **13** հասցե ապահովվել է **2 660 կմ** երկարությամբ լուսավորության ցանցով:



Մայթերի, պուրակների սալիկապատումն ընդգրկել է **1453 մ<sup>2</sup>** տարածք:



Հենապատեր են կառուցվել, վերանորոգվել Արաքկիր վարչական շրջանի **4** հասցեներում՝ **225 մ<sup>2</sup>** ընդհանուր տարածքով:





Նորաստեղծ կանաչապատված հատվածներն ընդհանուր առմամբ կազմել են 3 055 մ<sup>2</sup> տարածք: Ստեղծվել է 7 475 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 7 հանգստյան գոտի:

**Կառուցվել են պուրակներ**

- ⊗ Տիգրանյան 14 հասցեի տարածքում՝ 800 մ<sup>2</sup>,
  - ⊗ Բաբայան 22 հասցեին հարակից տարածքում՝ 500 մ<sup>2</sup>,
  - ⊗ Կոմիտաս 16 հասցեին հարակից տարածքում՝ 2 500 մ<sup>2</sup>,
  - ⊗ Կոմիտաս 26 հասցեին հարակից տարածքում՝ 680 մ<sup>2</sup>:
  - ⊗ Շրջանցիկ թունել հատուկ դպրոցին հարակից տարածքում 1 100 մ<sup>2</sup>:
- Վերակառուցվել է Վ.Դավթյանի անվան մանկական զբոսայգին՝ 1 050 մ<sup>2</sup>:





7280 մ<sup>2</sup> մակերեսում տնկվել է 98 600 հատ ծաղկասածիլ, 3 000 թուփ և 2 460 ծառ:  
 Աշտապես բարեկարգվում և խնամվում է 53 հա կանաչապատ տարածություն:  
 Անցկացվել է 700 գծմ երկարությամբ ոռոգման նոր ցանց: Վերանորոգվել են ոռոգման ցանցի  
 փնասված 1 960 գծմ ընդհանուր երկարությամբ հատվածներ:







- ⊗ 10 հասցեներում վերականգնվել և թարմացվել են շենքերի ճակատային մասի թափվող սալիկները:
- ⊗ Բարեկարգվել է 114 մուտք:
- ⊗ Վերանորոգվել է 10 035,7 մ<sup>2</sup> մակերեսով տանիք, որից 33 շենքերում՝ 5 736,9 մ<sup>2</sup> հարթ, իսկ 91 շենքում՝ 4 298,8 մ<sup>2</sup> թեք:
- ⊗ Ամրացվել է վթարային 58, նորոգվել՝ 255 պատշգամբ:
- ⊗ Համատիրություններին տրամադրված նյութերով վերանորոգվել է 1 710 մ<sup>2</sup> թեք տանիք:
- ⊗ Իրականացվել են 1 535 գծմ ընդհանուր երկարությամբ ներքին ջրագծերի վերանորոգման աշխատանքներ 30 բ/բ շենքերում: Վերանորոգվել է 18 վերելակ:








- ☑ Բարեկարգվել է 12 155 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 42 բակային տարածք:
- ☑ Հիմնանորոգվել է 9 բակ:
- ☑ Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել 7 բակում:
- ☑ Ապամոնտաժվել է 25 ավտոտնակ:
- ☑ Հանրային նշանակության բարեկարգ հատվածի է վերածվել ապօրինի հողազավթված 2 500 մ<sup>2</sup> տարածք:







Ադոնց 13 հասցեի բակում կառուցվել է մինի ֆուտբոլի խաղադաշտ:

Բակային տարածքները նկարագարվել են, համալրվել մարզագույքով:

Տեղադրվել են 115 նստարաններ, 1 զրուցարան, մանկական խաղեր:

26 հասցեում կառուցվել են խաղահրապարակներ:





- ✓ Ջրամատակարարման համակարգի վերանորոգում՝ **3 920 գծմ**,
- ✓ Կոյուղատար համակարգի վերանորոգում՝ **1 850 գծմ**,
- ✓ Գազիֆիկացում՝ **2 228 գծմ**,
- ✓ Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում՝ **5 958 գծմ**,
- ✓ Արտաքին լուսավորության ցանցի անցկացում՝ **2 350 գծմ**, տեղադրվել է **58 սյուն** և **60 պատային** ամրացում:

**ՄՅԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ**



Կազմակերպվել է **67 ծնողի** այցելություն **ԼՂՀ**-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ժամկետային զինծառայության մեջ գտնվող արաբկիրցի զինծառայողներին:

Կազմակերպվել են այցելություններ **ԼՂՀ Մարտունի քաղաքում** ծառայող արաբկիրցի զինծառայողներին, նրանց հանձնվել են նվերներ:





- ⊗ Սոցիալապես անապահով հարյուրավոր ընտանիքների տրամադրվել է դրամական աջակցություն:
- ⊗ Տարբեր բարեգործական ճաշարաններում սնվում են 278 արաբկիրցի:
- ⊗ Ճամբար մեկնող 100 երեխա նվեր է ստացել մարզաշապիկներ, արևապաշտպան գլխարկներ, քաղցրավենիք և խաղեր:
- ⊗ Մանկապարտեզների ավագ խմբերի 747 և սոցիալապես անապահով ընտանիքի 200 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ:
- ⊗ Կառուցվել է 37 թեքահարթակ:







«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 290 ընտանիքի տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**



Պետպատվերի շրջանակում 16 սոցիալապես անապահով անձանց տրվել են միջնորդագրեր՝ անվճար բուժօգնություն ստանալու համար:

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**




Նախադպրոցական հիմնարկների հիմնանորոգում, վերանորոգում.  
 ☑ հիմնանորոգվել է հ.25 մանկապարտեզը,  
 ☑ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել բոլոր մանկապարտեզներում:  
 Նախադպրոցական հիմնարկների համար գույքի ձեռքբերում.  
 ☑ ձեռք են բերվել զգեստապահարան, բազմահարկ մահճակալներ, մանկական աթոռներ, սեղաններ, սառնարան,  
 ☑ անվճար հիմունքով մանկապարտեզ է հաճախում 2482 երեխա:





Հիմնանորոգվել է 3 մարզադպրոց՝ Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը, Ա. Գրիգորյանի անվան սուսերամարտի մարզադպրոցը, Րաֆֆու անվան դպրոցի տարածքում գործող մարզադպրոցը:



Սպորտդպրոցներ հաճախող երեխաների թիվը

- ☉ Մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց են հաճախում՝ 164,
- ☉ Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց՝ 469,
- ☉ Երևանի Ալ. Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց՝ 238,
- ☉ Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց՝ 426,
- ☉ Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց՝ 225 երեխա և պատանի:





Կենտրոններ հաճախող երեխաների թիվը

- ⊗ Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց է հաճախում 503,
- ⊗ Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց՝ 493 երեխա:

Հ.5 և հ.6 գրադարաններից օգտվում է 3251 ընթերցող:

«Երևանյան ամառ-2016» ծրագրի շրջանակներում վարչական շրջանի Կ. Իսախանյանի անվան զբոսայգում, Քանաքեռ ՀԷԿ, Փափազյան 21, Տոլբուխին 4, Ա. Ավետիսյանի 74, 76 հասցեներում կազմակերպվել են բակային ճամբարներ:







Արաբկիր վարչական շրջանի պատվիրակությունը հյուրընկալվել և մասնակցել է Պլեսի Ռոբինսոն քաղաքի տոնին նվիրված տոնական միջոցառումներին: Միսս Պլեսի Ռոբինսոն գեղեցկության մրցույթի ժյուրիի կազմում ընդգրկված են եղել Արաբկիրի պատվիրակության անդամները: Ֆրանսիայում համերգային ծրագրերում Հայաստանն են ներկայացրել Հայկ Պետրոսյանն ու Նարինե Դովլաթյանը:

Հաշմանդամություն ունեցող 3 արաբկիրցի երեխաների համագործակցության արդյունքում նվիրվել են անվասայլակներ:



Արաբկիր-ՌԴ Սանկտ Պետերբուրգի Վասիլեոստրովսկի վարչական շրջան համագործակցության արդյունքում ծրագրեր են հաստատվել:

Արաբկիր-ԼՂՀ համագործակցության շրջանակում Մարտունի քաղաք և զորամասեր այցելություններ են կազմակերպվել:

Լոռու մարզի հետ համագործակցության շրջանակում այցելություն է կազմակերպվել Դսեղի մանկապարտեզ: Լոռու մարզի դպրոցներին տրվել են մեթոդական ձեռնարկներ, ուսումնական գրականություն և ուսումնադիտողական պարագաներ:





**2016**  
**ԱՐԱԲԿԻՐ**  
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

**Թեժ գիծ`**

+ (374 11) 518-188  
arabkir@yerevan.am



[www.yerevan.am](http://www.yerevan.am)